ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԱՅԿ ԹԻՐԱԲՅԱՆԻ, ԱԼԲԵՐՏ ՔԵԼԱՄՅԱՆԻ, ԵՐՎԱՆԴ ՍԱԼԱԽՅԱՆԻ, ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ԱՐԹՈՒՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ԱՐԹՈՒՐ ԽՆՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 105-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունել «Քաղաքացիներ Հայկ Թիրաբյանի, Ալբերտ Քելամյանի, Երվանդ Սալախյանի, Խաչատուր Վարդանյանի, Արթուր Հայրապետյանի եւ Արթուր Խնոյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով կարճելու վերաբերյալ գործով զեկուցողի առաջարկությունը՝ հետեւյալ հիմնավորմամբ.

Դիմողները ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը՝ ըստ էության բարձրացնում են այդ դրույթի կիրառման իրավաչափության եւ կիրառման արդյունքում ընդունված դատական ակտերի օրինականության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32

հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Ելնելով վերոնշյալ հիմնավորումից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի եւ 60-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Քաղաքացիներ Հայկ Թիրաբյանի, Ալբերտ Քելամյանի, Երվանդ Սալախյանի, Խաչատուր Վարդանյանի, Արթուր Հայրապետյանի եւ Արթուր Խնոյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 ապրիլի 2015 թվականի
ՍԴԱՈ-19